Երևանի գաւառապետ Լ. Ամիրխանեանը, Էջմիածնի՝ Սեդրաք Ջալալեանը, Դարալագեազի՝ Ն. Ցակոբեանը, Նոր-Բայազէտի՝ Բէնո Նալչաջեանը, Դիլիջանի՝ Մեսրոպ Սարատիկեանը, Ղարաքիլիսայի՝ Սիգո Տէր-Սարգսեանը, Ալեքսանդրապոլի՝ Թալանեանը, Կարսի նահանգից՝ Ստ. Ղորղանեանը, Զանգեզուրից՝ Նիկ. Ցովսէփեանը, Սուրմալուից՝ Հ. Խորհրդի անդամ Իւսուֆ բէգ Թեմուրեանը (եզիդի)։ Համագումարին, մէջ ընդ մէջ, մասնակցեցին նաև Հայ. Խորհրդի ու կառավարութեան անդամները, նախարարութեանց ներկայացուցիչները և այլն։ Օրակարգի մէջ դրուած էին բազմաթիւ հարցեր։ Զուտ վարչական-ոստիկանական հարցերից յիշենք 1) երկրի վարչական սահմանների սրբագրութեան հարցը, 2) մասնագէտ ոստիկանների պատրաստութիւնը և ոստիկանական դպրոցի բացումը, 3) պաշտօնէութեան ու ոստիկանութեան տնտեսական վիճակի բարելաւումը, 4) ոստիկանների համազգեստի խնդիրը։ Համագումարը ջերմ հետաքրքրութիւն առաջ բերեց իր շուրջը։ Նրա ոգին էր Ս. Մանասեանը՝ մէկը այն անաղմուկ, բայց եռանդուն գործիչներից, որոնց, ամէն բանից առաջ, հետաքրքրում է կենդանի գործը։ Հին յեղափոխական, պատասխանատու դերակատար ժողովրդական ինքնապաշտպանութեան կազմակերպութեան շրջանում, Մանասեանը, որպէս ներքին գործոց նախարարութեան վարիչ էլ Երևան բերեց վարչական բարձր կարողութիւն։ Երկար ժամանակ, փաստօրէն նա էր ներքին գործոց նախարարութեան ղեկավարը, և Հայաստանի ներքին կազմակերպութիւնն ու զարգացումը շատ բանով նրան է պարտական։

Կառավարութիւնը աշխատեց աստիճանաբար հայացնել բոլոր պետական հիմնարկութիւնները՝ խուսափելով, սակայն, կտրուկ միջոցներից։ Այս պարագան ջղայնացնում էր հասարակութեան որոշ մասերը, մանաւանդ, թիւրքահայերին, որոնք պահանջում էին անմիջապէս հայացնել ամբողջ պետական մեքենան։ Մամուլը, մանաւանդ, անողոք քննադատութեան էր ենթարկում այն հիմնարկութիւնները, ուր ազգայնացումը դնում էր դանդաղ։ Ապր. 17-ին Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցաւ հայ թերթերի ներկայացուցիչների առաջին ժողովը՝ մասնակցութեամբ «Աշխատանք»-ի խմբագիր Հմ. Մանուկեանի, «Հայաստանի Աշխատաւոր»-ի խմբագիր Վ. Խորէնի, «Հայաստանի Կооպերացիա»-յից Զ. Կորկոտեանի և «Վան-Տոսպ»-ից՝ Ա. Աւետիսեանի, որ կայացրեց հետևեալ որոշումները. 1. Կոչ ուղղել պետական, հասարակական ու մասնաւոր հիմնարկութիւններին՝ խօսել ու գրել հայերէնով։ 2. Մերժել ո՛չ հայերէնով գրութիւններ, լուրեր ու յայտարարութիւններ ընդունել։ Վերջինի համար բացառութիւն համարել միայն այն պարագան, երբ անոր կընկերանայ հայերէնը և կամ թէ երբ ոչ հայերու կողմէ է տրուած։ 3. Պահանջել հայերէն լեզուի պաշտօնականացում, իսկ միւսների գործածութիւնը թոյլատրել միայն որպէս օժանդակ լեզուներ։ 4. Թերթերի մէջ ունենալ «հայացման» բաժին, ուր տալեալու են լուրեր թէ գրական և թէ բացասական, նոյնիսկ ագիտացիոն բնաւորութիւն ունեցող՝ հայ լեզուի գործածութեան շուրջ։ 5. Կազմուած հռչակել «Հայացման Կոմիտէ», որի մէջ մտնելու են ներկաները, ինչպէս նաև հրաւիրուում են մասնակցելու բացակայ թերթերի, նախարարութիւն-